ԷՍՍԵՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջը հայտարարում է էսսեների (փորձագրություն) մրցույթ քոլեջի ուսանողների համար:

Մրցույթի թեման է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մրցույթին մասնակցելու պայմանները՝

- մրցույթին կարող են մասնակցել միայն ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի ուսանողները,
- յուրաքանչյուր մասնակից պետք է ներկայացնի միայն մեկ հայտ,
- ուսանողներն էսսեները պետք է ներկայացնեն անհատապես. խմբային աշխատանքները չեն ընդունվում,
- էսսեների ներկայացման վերջնաժամկետն է՝ 2024 թ. մայիսի 2-ը՝ ժամը 17:30-ը,
- էսսեները և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը անհրաժեշտ է ուղարկել asuecollegescience@gmail.com էլեկտրոնային հասցեին կամ փաստաթղթային տարբերակով ներկայացնել ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի կրթության մեթոդիստ Ա. Ալեքսանյանին (հասցե՝ ք. Երևան Մ. Բաբաջանյան 9):

Մրցույթի արդյունքի համաձայն՝ առաջին, երկորդ և երրորդ տեղերը զբաղեցրած մասնակցիներին համապատասխանաբար կտրվեն մրցանակներ՝ 100.000, 70.000 և 50.000 ՀՀ դրամ (առանց հարկերի և այլ պարտադիր վճարների):

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ԹԵՄԱ՝ **Հայաստանի տնտեսության զարգացման հեռանկարներն ու առաջնահերթությունները**

ՆՊԱՏԱԿ՝ Տնտեսության զարգացման առաջնահերթությունների վերլուծություն և հնարավորությունների վերհանում Հայաստանում և աշխարհում

ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ֆինանսաբանկային համակարգ
2. Շուկաներ, ձեռնարկատիրություն, նորարարություն, գիտելիք, մրցակցություն
3. Մարդկային ռեսուրսների կառավարում
4. Սոցիալական քաղաքականություն և ժողովրդագրություն
5. Շրջակա միջավայրի պահպանություն և կլիմայի փոփոխություն
6. Տնտեսական անվտանգություն
7. Հայաստան և աշխարհ

ԷՍՍԵՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Էսսեները պետք է համապատասխանեն մրցույթի թեմային,
- պարունակեն միմյանց չհակասող իրական և փաստարկված տվյալներ՝ տրամաբանական հաջորդականությամբ,
- լինեն ինքնատիպ, հիմնավորված և պարունակեն հետազոտական միտք,
- համապատասխանեն հետևյալ տեխնիկական պահանջներին՝
  - առավելագույն ծավալը՝ 12 էջ,
  - էջի լուսանցքները՝ վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2,5 սմ, ձախից՝ 3 սմ և աջից՝ 1 սմ,
  - տառատեսակը՝ GHEA Grapalat կամ GHEA Mariam,
  - տառաչափը՝ 12, տողամիջյան հեռավորությունը՝ 1,5, իսկ աղյուսակները, գծապատկերները և հղումները՝ 10,
  - այլ աղբյուրներից մեջբերումների դեպքում հղումները պարտադիր են,
  - թույլատրվում են աղյուսակներ և գծապատկերներ, որոնցից յուրաքանչյուրի ծավալը չպետք է գերազանցի 1 էջը:
- Էսսեները պետք է բաղկացած լինեն հետևյալ բաժիններից՝
  - **հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն** (վերևի աջ անկյունում),

- **վերնագիր** (մեկ տող ներքևից, կենտրոնական հավասարեցմամբ՝ մեծատառերով),
- **համառոտագիր.** էսսեի ամփոփ բովանդակությունը 0.5 - 1 էջի սահմաններում. ներկայացվում են հետազոտության հիմնական բովանդակությունը և ստացված արդյունքը,
- **հիմնաբառեր.** 4 - 6 հիմնաբառ:
- **Ներածություն.** սույն բաժնում անհրաժեշտ է ներկայացնել հիմնախնդրի արդիականությունը, հրատապությունը, վերջին տարիների զարգացումները, ձևակերպել ուսումնասիրության նպատակը:
- **Վերլուծություն և արդյունք.** թվային ցուցանիշների կիրառում և դրանց վրա հիմնված հաշվարկների իրականացում, փաստերի արձանագրում, հետազոտության օբյեկտի օրինաչափությունների, զարգացման միտումների, խոչընդոտների բացահայտում, հետազոտության հիմնական արդյունքների ձևակերպում:
- **Եզրակացություն.** հետազոտության հիմնական արդյունքների համառոտ ներկայացում և հստակ ձևակերպված առաջարկների մշակում, որոնք բխում են ուսումնասիրության արդյունքից:
- **Գրականության ցանկ.** գրականության ցանկը կազմվում է նոր էջից, ներկայացվում է հաջորդաբար՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն՝ յուրաքանչյուրում պահպանելով այբբենական կարգը: Առցանց հղումներ պարունակող աղբյուրները դրվում են վերջում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. մրցույթին մասնակցության հայտ,
2. տեղեկանք ուսումնական մասից,
3. անձնագրի պատճեն,
4. ներկայացված էսսե՝ սահմանված պահանջներին համապատասխան:

Էսսեները գնահատվում են հավելված 1-ով ներկայացված ցուցանիշներին համապատասխան: Հաղթող է ճանաչվում առավելագույն միավորներ հավաքած անձը: Հավասար միավորներ վաստակելու դեպքում համապատասխան ուսանողները ճանաչվում են հաղթող:

ՀՊՏՀ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Ազգանուն, անուն, հայրանուն _____

_____

Մասնագիտություն և կուրս _____

_____

Էսսեի վերնագիր _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հեռախոսահամար _____

Էլեկտրոնային փոստի հասցե _____

Ստորագրություն

Ամսաթիվ

ՁԵՎԱՆՄՈՒՇ

Հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն

ԷՍՍԵԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ

Համառոտագիր: Էսսեի ամփոփ բովանդակությունը 0.5-1 էջի սահմաններում. ներկայացվում են հետազոտության հիմնական բովանդակությունը և ստացված արդյունքը:

Հիմնաբառեր. 4 - 6 հիմնաբառ

Ներածություն: Անհրաժեշտ է ներկայացնել հիմնախնդրի արդիականությունը, հրատապությունը, վերջին տարիների զարգացումները, ձևակերպել ուսումնասիրության նպատակը:

Վերլուծություն և արդյունք: Թվային ցուցանիշների կիրառում և դրանց վրա հիմնված հաշվարկների իրականացում, փաստերի արձանագրում, հետազոտության օբյեկտի օրինաչափությունների, զարգացման միտումների, խոչընդոտների բացահայտում, հետազոտության հիմնական արդյունքների ձևակերպում:

Աղյուսակները և գծապատկերները համարակալվում են, աղյուսակների վերնագրերը դրվում են վերևում, իսկ գծապատկերների վերնագրերը՝ ներքևում (տե՛ս աղյուսակ 1-ի և գծապատկեր 1-ի օրինակները):

Աղյուսակ 1

ՀՀ-ում .... ցուցանիշների դինամիկան 2013 - 2023 թթ.[1]

	2013	20..	20..	20..	20..	2023

[1] Տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույց, ԱՐՄՍՏԱՏ, Եր., 20.., https://armstat.am/file/article/poverty_20._a_2..pdf , էջ ..:



Գծապատկեր 1. ՀՀ-ում .... ցուցանիշների դինամիկան 20.. - 20.. թթ.[2]

Այլ աղբյուրներից մեջբերումների դեպքում հղումները պարտադիր են, օրինակ՝

Մանկական աղքատությունը սովորաբար տարբերվում է մեծահասակների աղքատությունից, քանզի կարող է ունենալ տարբեր պատճառներ և հետևանքներ: Զրկանքների անգամ կարճ ժամանակահատվածները կարող են բացասական ազդեցություն թողնել երեխաների աճի և զարգացման վրա՝ երկարաժամկետ կտրվածքով[3]:

Եզրակացություն: Հետազոտության հիմնական արդյունքների համառոտ ներկայացում և հստակ ձևակերպված առաջարկների մշակում, որոնք բխում են ուսումնասիրության արդյունքից:

---

[2] Կազմվել է հեղինակի կողմից՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցի տվյալների հիման վրա:

[3] Minuji A., Delamonica E., Davidzuk A. and Gonzalez E., The Definition of the Child Poverty: a discussion of concepts and measurements; Environment & Urbanization Copyright © 2006 International Institute for Environment and Development, Vol. 18(2), pp. 481-500, https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0956247806069627, p.483.

Գրականության ցանկ

Ներկայացվում է հաջորդաբար՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն՝ յուրաքանչյուրում պահպանելով այբբենական կարգը:

Առցանց հղումներ պարունակող աղբյուրները դրվում են վերջում: Օրինակ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, ընդ. 2004 թ. նոյեմբերի 9, փոփ. 2022 թ., դեկ. 7:
2. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական-վերլուծական զեկույց, ԱՐՄՍՏԱՏ, Եր., 2023:
3. Детская бедность в Европе и Центральной Азии: определения масштабов, тенденции и рекомендации, ЮНИСЕФ, декабрь, 2017, https://www.unicef.org/eca/media/3401/file/Child-poverty-regionalreport-russian.pdf .
4. Индекс детской бедности и лишений в Кыргызской Республике, Национальный Статистический Комитет Кыргызской Республики, http://www.stat.kg/ru/publications/indeks-detskoj-bednosti-i-lishenij-vkyrgyzskoj-respublike/ .
5. Zhang, D. (2021). The media and think tanks in China: The construction and propagation of a think tank. Media Asia, 48 (2): 123-138.
6. https://www.unicef.org/social-policy/child-poverty
7.
8.
9.
10.

Հավելված 1

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Էսսեները գնահատվում են մրցութային հանձնաժողովի կողմից՝ ըստ ստորև ներկայացված գնահատման սանդղակի*

N	Գնահատման չափանիշ	Միավոր
1.	Թեմայի արդիականություն, համապատասխանություն առաջադրված նպատակին և խնդիրներին	2
2.	Հիմնավոր վերլուծություն, միմյանց չհակասող փաստարկներ	2
3.	Նորարարական մտքի առկայություն	2
4.	Հիմնավորված եզրակացություն և կիրառական առաջարկներ	2
5.	Հետազոտության ներկայացման որակ	2

*Գնահատվում են մրցութային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: